



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էր՝ Էմիլ Սարգսյանը

#### Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, համայնքի ղեկավարի օգնական Արմեն Ստեփանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, արաջատար մասնագետ՝ Կարեն Մարտիրոսյանը, առաջին կարգի մասնագետ՝ Նաիրա Ստեփանյանը:

#### Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

#### Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 28-ի թիվ 2 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլածոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 2 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլածոր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
3. 2019 թվականին Գլածոր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ներկայացման մասին:
4. Գլածոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Արամ Դրաստիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
5. Գլածոր համայնքի Գետափ բնակավայրում 2019 թվականին կառուցված գազատարը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Վայոց ձորի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղին անհատույց տրամադրելու մասին:
6. «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրի շրջանակներում փոքր դրամաշնորհային ծրագրին համաֆինանսավորում կատարելու մասին:
7. Գլածոր համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 26-ի թիվ 58-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
8. Գլածոր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի թիվ 17-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
9. Գլածոր համայնքի Գետափ բնակավայրում եկեղեցի կառուցելու համար բարերար Լաուրա Հարությունյանին տեղական տուրքի գծով արտոնություն տալու մասին:
10. Գլածոր համայնքի Վերնաշեն բնակավայրի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլանը հաստատելու մասին:
11. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:
12. Գլածոր համայնքի բնակիչների կողմից ներկայացված մի շարք դիմումների քննարկման մասին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17/

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Գլաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին.

**2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Գլաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ 2019 թվականին համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19/